

Վարդապառ՝ Տօս Պայծառապետո՞ւթեան Քրիստոս

29 ՅՈՒՆԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Բացատրութիւն	Էջ 3
Թափոք Լեռ	Էջ 4
Յովհ. Մկրտիչի Քարոզութիւնը (Բ)	Էջ 5
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 8

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԷՆ (7.25-8.4)

Ի մաստուծիւնը Աստուծոյ զօրութեան ճաճանչն է, ամենակալին փառքին ճշմարիտ ծագումը. ուստի ո՛չ մէկ պիղծ բան կը խառնուի անոր մէջ: Մշտնջենաւոր լոյսին նշոյլն է անիկա, Աստուծոյ ներգործութեան անարատ հայելին եւ անոր բարերարութեան պատկերը:

Մէկ է անիկա եւ ամենակարող, ինքնակալ է եւ բոլորը նորոգող: Բոլոր ժամանակներուն ալ մաքուր հոգիներուն մէջ կը բնակի եւ գանոնք Աստուծոյ բարեկամ ու մարգարէ կը դարձնէ, որովհետեւ Աստուած կը սիրէ միայն ան՝ որ իմաստութեամբ կ'ապրի:

Իմաստութիւնը աւելի գեղեցիկ է քան արեւը, գերիվեր է քան բոլոր համաստեղութիւնները: Լոյսին հետ համեմատած՝ գերազանց է անիկա, որովհետեւ մինչ գիշերը փոխն ի փոխ լոյսին տեղը կ'առնէ, չարը չի կրնար յաղթել իմաստութեան:

Անիկա աշխարհի մէկ ծայրէն միւսը կը սփռէ իր օգուտները եւ իր բարերարութեամբ կը խնամէ բոլորը: Երիտասարդութեանս օրերէն իսկ սիրեցի ու փնտռեցի զայն, ուզեցի զայն ինծի հարս ունենալ, անոր գեղեցկութեան ցանկացի: Անիկա իր ազնուական ծագումը կը փառաւորէ, որովհետեւ Աստուծոյ կեանքին հաղորդակից է եւ տիեզերքի Տէրը սիրեց զայն: Արդարեւ անիկա խորհրդակից է Աստուծոյ իմաստութեան եւ իր ընտրութեամբ մասնակից է անոր գործերուն:

ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (14.16-21)

Այն ատեն, երուսաղէմի վրայ արշաւած բոլոր ազգերու մնացորդները տարուէ տարի երուսաղէմ պիտի գան երկրպագելու Թագաւորին,

ամենակալ Տէր Աստուծոյ, եւ Տաղաւարահարաց տօնը կատարելու: Այն ժողովուրդը որ մերժէ երուսաղէմ գալ երկրպագելու Թագաւորին ամենակալ Տէր Աստուծոյ, անիկա անձրեւ պիտի չունենայ իր երկրին վրայ:

Եթէ եգիպտոսի ժողովուրդը չելլէ ու չգայ, պիտի ենթարկուի նոյն հարուածին որով Տէրը պիտի պատուհասէ այն ժողովուրդները որոնք Տաղաւարահարաց տօնը կատարելու չեն գար:

Եւ Պատուհասը որ եգիպտացիներուն վրայ պիտի գայ՝ պիտի գայ նաեւ բոլոր այն ժողովուրդներուն վրայ որոնք Տաղաւարահարաց տօնը կատարելու չեն գար: Այն օրը նոյնիսկ ձիերու սանձին վրայ գրուած պիտի ըլլայ. «Տիրոջ համար սրբագործուած»: Աստուծոյ տան կաթսաներն իսկ սուրբ պիտի համարուին զոհասեղանին վրայ գրուած տաշտերուն նման, ու երուսաղէմի եւ Հրէաստանի մէջ գտնուող ամէն կաթսայ ամենակալ Տիրոջ անունով նուիրագործուած պիտի ըլլայ. այնպէս որ բոլոր անոնք որ զոհ մատուցանելու կու գան՝ պիտի առնեն զանոնք եւ անոնց մէջ եփեն իրենց մատաղը: Եւ այն օրը Աստուծոյ տան մէջ ոեւէ վաճառորդ պիտի չգտնուի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.1-7)

Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Ան նոյնինքն կեանքն էր, որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն՝ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան, որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

Եթէ ըսեմք “հաղորդակից եմք իրեմ” եւ միւս կողմէ շարունակեմք խաւարի մէջ ապրիլ, կը ստեմք ահա եւ ճշմարտութեան դէմ կը գործեմք:

Պատգամը որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք “հաղորդակից ենք իրեն” եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութեան դէմ կը գործենք: Իսկ եթէ Աստուծոյ լոյսին մէջ քայլենք, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ  
(16.13-17.13)

**Ե**րբ Յիսուս Փիլիպպոսի կառուցած կեսարիայի կողմերը եկաւ, իր աշակերտներուն հարցուց. «Մարդիկ ի՞նչ կ'ըսեն մարդու Որդիին մասին. ո՞վ եմ ես»: Անոնք պատասխանեցին. «Ոմանք քեզ Յովհաննէս Մկրտիչը կը կարծեն, ոմանք Եղիա մարգարէն, իսկ ուրիշներ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»: Յիսուս հարցուց անոնց. «Իսկ դո՞ւք ով կը կարծէք զիս»: Միմոն Պետրոս պատասխանեց. «Դուն Քրիստոսն ես կենդանի Աստուծոյ Որդին»: Յիսուս ըսաւ անոր. «Երանի՛ք եզի Միմոն, Յովնանի որդի, որովհետեւ ատիկա քեզի յայտնողը մարդ մը չէր, այլ իմ Հայրս որ երկինքի մէջ է: Քեզ “Պետրոս”, այսինքն ժայռ կոչեցի, եւ այդ ժայռին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, զոր մահն իսկ պիտի չկարենայ յաղթահարել: Քեզի պիտի տամ երկինքի արքայութեան բանալիները, եւ ինչ որ կապես երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ եւ ինչ որ արձակես երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ»: Ապա Յիսուս խստիւ պատուիրեց իր աշակերտներուն, որ ոեւէ մէկուն չըսեն թէ ինքն է Քրիստոսը:

«Դուն Քրիստոսն ես կենդանի Աստուծոյ Որդին»:

Այս դէպքէն ետք, Յիսուս սկսաւ յայտնել իր աշակերտներուն, թէ պէտք է որ ինք Երուսաղէմ երթայ, ուր շատ պիտի չարչարուի քահանայապետներէն, Օրէնքի ուսուցիչներէն եւ երէցներէն. զինք նոյնիսկ պիտի սպաննեն եւ սակայն ինք երրորդ օրը յարուսթիւն պիտի առնէ:

Ասոր վրայ Պետրոս զինք մէկ կողմ տարաւ եւ սկսաւ հակառակելով վիճիլ. «Քաւ լիցի, Տէ՛ր, այդպիսի բան թող չպատահի քեզի»: Յիսուս Պետրոսի դառնալով ըսաւ. «Ետիս գնա, սատանա՛յ, դուն արգելք ես ինծի, որովհետեւ Աստուծոյ ծրագիրը չէ որ կը խորհիս, այլ մարդոց մտահոգութիւնը կ'արտայայտես»:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ հետեւէս գայ: Որովհետեւ ով որ

ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ ինծի համար կորսնցնէ իր անձը՝ պիտի գտնէ զայն: Ի՞նչ օգուտ, երբ մէկը ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ ոեւէ բանով չի կրնար իր կեանքը ետ առնել: Արդարեւ, երբ մարդու Որդին գայ իր Հօր փառքով իր հրեշտակներուն հետ, իւրաքանչիւրին իրեն գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ: Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ իր թագաւորութեամբ»:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր գէմքը արեւունման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան:

Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, ի՞նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար»: Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր. «Այս է իմ սիրելի Որդիս որ հաւնեցայ. անոր մտիկ ըրէք»: Երբ աշակերտները լսեցին ասիկա, սարսափահար՝ երեսի վրայ գետին ինկան: Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. «Ոտքի՛ ելէք, մի՛ վախճաք»: Աշակերտները իրենց աչքերը վեր բարձրացուցին եւ Յիսուսէ զատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց, ըսելով. «Մինչեւ որ մարդու Որդին մեռնենք յարուսթիւն չառնէ, ձեր տեսածը ոեւէ մէկուն մի՛ պատմէք»: Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի. «Հապա ինչ ո՞ւր Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն թէ նախ Եղիան պէտք է գայ»: Յիսուս պատասխանեց. «Ճի՛շդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամէն ինչ. բայց զիտցէք որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ անոր հետ վարուեցան ինչպէս որ ուզեցին: Նոյնպէս ալ Մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ»: Այն ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչի մասին կը խօսէր ան:

«Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ հետեւէս գայ»:

«Այս է իմ սիրելի Որդիս որ հաւնեցայ. անոր մտիկ ըրէք»:

ՏՕՆ ՊԱՅԾԱՌ-ԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ  
(ԾԻՍԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ - ԹԻ 23)

ԻԳ

Գ. ՏԱՂԱԲԱՐ ՏՕՆ

Անունները: Դեպքը:

1.- Այս տօնը երեք անուններ ունի: Հնագոյնը «Վարդավառ»ն է, որ կու գայ հեթանոսական օրերէն, իսկ քրիստոնէական շրջանի անուններն են՝ «Այլակերպութիւն»ը եւ «Պայծառակերպութիւն»ը:

Տօնին «Այլակերպութիւն» անունը դէպքին նկարագրութեան մէջ գործածուած «այլակերպեցաւ» բառէն եկած է, որ տառացի թարգմանութիւնն է յունարէն «մեթեմորֆօթէ»ին: Իսկ «Պայծառակերպութիւն» անունը եկած է նկարագրութեան հետեւեալ պատկերէն՝ «իբ դէմքը արեւուճման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի ման ճերմակ եղան» (Մտ 17.2), կամ՝ «հագուստները փայլուն, ճիւղի պէս ճերմակ եղան, այնքան՝ որ աշխարհի վրայ ո՛չ մէկ թափիչ կրնար այդպէս ճերմակ դարձնել» (Մկ 9.3), կամ՝ «անոր դէմքը այլակերպեցաւ եւ հագուստը փայլուն սպիտակ գոյն առաւ» (Ղկ 9.29): Պայծառակերպութիւնը դէպքին ամենաթեւադրական անունն է:

«Վարդավառ» անունի հեթանոսական ծագումին ակնարկեցի: Կարճ լուսաբանութիւն մը: Վարդավառի տօնը, աւելի ճիշդ՝ տօնախմբութիւնը (առիթը մէկ օրուայ ուրախութեան համար չէր. «մեծամեծ հանդէսներ»ու շարք մը կազմակերպուած կ'ըլլար) նուիրուած էր Աստղիկ դիցուհիին: Անիկա կը կատարուէր Յուլիս ամսուան մէջ: «Վարդավառ»

«Իբ դէմք արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան»

կը կոչէին դիցուհիին տօնախմբութիւնը, որովհետեւ անոր արձանները վարդերով զարդարեալ կը վառէին:

Ի շարս այլ հեթանոսական տօնախմբութիւններու, «Վարդավառ»ն ալ իմաստ եւ բովանդակութիւն փոխելով՝ քրիստոնէական նշանակութիւն առաւ: Ըստ միջնադարեան մեկնաբանութեան մը, վարդը խորհրդանշան է Քրիստոսի աստուածութեան: Այլակերպութեամբ՝ Քրիստոսի աստուածութիւնը կոկոնէն բացուող վարդին պէս յայտնուեցաւ: Իսկ «վառ»ին համար: Աստուածութեան խորհրդանշան եղած է կրակը: Ուրեմն, հասկցուածն է թէ՛ Վարդավառը Քրիստոսի աստուածութիւն-կրակին յայտնութեան տօնն է:

2.- Այլակերպութեան դէպքը տարբերակ նկարագրութիւններով արձանագրուած է Մատթէոսի (17.1-13), Մարկոսի (9.1-13) եւ Ղուկասի (9.28-36) աւետարաններուն մէջ: Նկատի ունենալով, որ Օրուայ Ս. Գրային ընթերցումներուն մէջ, դէպքին նկարագրութեան Մատթէոսեան տարբերակը տրուած է, ուստի գայն պիտի առնեմ բացատրութեանս համար: Այստեղ ըսեմ, որ Մատթէոսի աղբիւրը Մարկոսի աւետարանը եղած է:

Ընթերցումը դէպքին նկարագրութեանն առաջ, կարծէք գայն նախապատրաստող բաժին մը ունի, որ 16.13-28-ը կ'երկարի: Նախապատրաստական այդ հատուածը երեք մասեր ունի, որոնց տրուած են հետեւեալ անունները. «Պետրոսի Յայտարարութիւնը Յիսուսի Մասին», «Յիսուս կը Խօսի Իր Չարչարանքներուն, Մահուան Եւ Յարութեան Մասին», եւ՝ «Յիսուսի Հետեւելու Պայմանները»:

Ըստ միջնադարեան մեկնաբանութեան մը, վարդը խորհրդանշան է Քրիստոսի աստուածութեան:

Առաջին մասին կորիզը խոստովանութիւն մըն է, որով Յիսուս՝ «Քրիստոս» եւ «Աստուծոյ Որդի» կը յայտարարուի:

Երկրորդ մասով Յիսուս կը մարգարէանայ իր չարչարանքները, մահը եւ յարութիւնը: Այստեղ կը պարզուի, թէ Յիսուսի «Քրիստոս» եւ «Աստուծոյ Որդի» ըլլալը սերտօրէն կապուած են իր երկրաւոր վախճանին: Այդ պատճառով ալ Չարը այդ կապը խախտել կ'ոգէ: Ըստ Յիսուսի, Աստուծոյ ծրագիրն էր «Քրիստոս»ի կամ «Աստուծոյ Որդի»ին չարչարանքներէն եւ մահէն անցնելը եւ յարութեամբ յաղթանակելը:

Երրորդ մասով Յիսուս իրեն հետեւելու ճանապարհին կեանքի գնով սուղ արժեքը կը յայտնէ: Բայց միաժամանակ՝ աշխարհի վախճանին «մօտալուտ» գալստեան հորիզոնը ցոյց տալով՝ իւրաքանչիւրի կատարած գործերուն համաձայն՝ հատուցում կը խոստանայ:

Ահա այս հատուածէն հոք նկարագրուած է այլակերպութիւնը, որ երկու մաս ունի. նախ՝ դէպքը (1-9), եւ ապա՝ աշակերտներուն հետ խօսակցութիւն մը (10-13):

Յիսուս իր աշակերտներէն երեքը՝ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները առնելով «գանոնք բարձր լեռ մը» կը հանէ: Հաւանաբար, աշակերտներու խումբին մէջ այս երեքը Յիսուսի անմիջական շրջանակն էին:

«Բարձր լեռ մը»: Կարելոր չէ թէ ո՞ր լեռն էր անիկա. Թափո՞րը թէ Հերմոնը: Աւետարանիչներէն ոեւէ մէկը անունը չէ գրած (Ղուկաս որակում ալ չունի եւ պարզապէս «լեռ» կ'ըսէ, այսինքն՝ առանց «բարձր»ին): Իրենք չէին հետաքրքրուած, թէ ո՞ր լեռն է, որ Յիսուս բարձրացած էր: Իրենց համար փորձառութիւնն էր էականը: Եւ ճիշդ այդ փորձառութիւնը բարձր էր, որովհետեւ շնորհը կ'ունենար ճանչնալու Մովսէս եւ Եղիա մարգարէներուն ներդաշնակութիւնը Յիսուսի հետ: Զարեհ արքեպիսկոպոս գոյգ մարգարէներուն պայշտպանները: Մին Օրէնքի միջնորդ տուիչն է, միւսը կենդանի Աստուծոյ ոգեղէն ներկայութեան թարգմանը: Պայծառակերպութեան պահուն անոնց ներկայութիւնը կարծէք կենդանի վկայութիւնն է Հին Կտակարանին... Եւ հիմա Քրիստոսի ցոյց տուած աստուածային գործերու վկայութեան հետ անոր աստուածային հանգամանքին եւ առաքելութեան վկայելու կու գան Օրէնքն ու մարգարէութեան ոգին»:

Մարգարէները կը խօսակցէին Յիսուսի հետ: Ի՞նչ էր անոնց նիւթը: Ո՛չ Մատթէոս եւ ո՛չ ալ աղբիւրը՝ Մարկոս այդ մասին բան չեն գրած: Միայն Ղուկասի մօտ կը կարդանք, թէ նիւթը Յիսուսի մահն էր, «որ պիտի պատահէր Երուսաղէմի մէջ» (Ղկ 9.31):

Մին Օրէնքի միջնորդ տուիչն է, միւսը կենդանի Աստուծոյ ոգեղէն ներկայութեան քարգմանը:

Պետրոս առաքեալ հիացականօրէն ըսած է. «Տէ՛ր, ի՞նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես՝ երեք վրաններ շինենք. մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար»:

Դրուսազը կ'ըսէ, թէ մինչ առաքելը կը խօսէր, «լուսաւոր ամպ մը ծածկեց գիրենք»: «Ամպ»ը խորհրդանշան է Աստուծոյ

ներկայութեան (Եւբ 16.10, Գ. Թգ 8.10): Եւ ահա «ամպին մէջէն ձայն մը» կ'ըսէ. «Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ. անոր մօտիկ ըրէք»: Վկայութեան առաջին մասը («Այս է իմ սիրելի Որդիս, որուն հաճեցայ») Աստուած տուած էր Յիսուսի մկրտութեան ատեն (3.17): Հիմա կ'աւելնար «անոր մօտիկ ըրէք»ը: Ըստ Շնորհք արքեպիսկոպոսի, վկայութեան վերջին մասը բանալին, նպատակը եւ բացատրութիւնը կը կազմէ Այլակերպութեան խորհուրդին: Անիկա երեք առաքելներուն վրայով «կ'ուղղուի բոլոր դարերուն, բոլոր սերունդներուն»: Երբ աշակերտները լսեցին երկնային ձայնը սարսափահար՝ երեսի վրայ գետին ինկան: Սակայն Յիսուս անոնց ըսաւ՝ «Ոտքի՛ ելէք, մի՛ վախնաք»: Պայծառակերպութեան փորձառութիւնը մարդ էակի կանգնումին համար է, եւ ոչ թէ անոր սոսկումնահար անկումին:

Հատուածին երկրորդ մասը Յիսուսի եւ աշակերտներուն միջեւ խօսակցութիւնն մըն է: Յիսուս կը պատուիրէ աշակերտներուն իրենց տեսածը ոեւէ մէկուն չըսել՝ մինչեւ որ «Մարդու Որդին մեռելներէն յարութիւն չառնէ»: Ինչո՞ւ Յիսուս չ'ուզեր, որ անոնք ոեւէ մէկուն չըսեն հրաշալի դէպքին մասին: Որովհետեւ առանց Յիսուսի չարհարանքներուն եւ մահուան պատահելուն ու յարութեան փորձառութեան, այլակերպութիւնը հաւատարի/իմանարի պիտի չըլլար: Պայծառակերպութիւնը Յիսուսի մեսիական ինքնութեան յայտնութիւնն էր: Աստուածային ծրագիրն էր, որ ան Երուսաղէմ երթար, այնտեղ չարհարուէր, սպանուէր եւ երրորդ օրը յարութիւն առնէր (հմմտ Մտ 16.21):

Այն օրերու մեսիական ակնկալութիւնն էր՝ թէ Մարդու Որդիի (մեսիային տրուած անուն) գալէն առաջ՝ Եղիա մարգարէն պիտի գայ: Աշակերտները այդ ակնկալութեան կ'ակնարկեն, երբ կ'ըսեն՝ «Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն, թէ նախ Եղիան պէտք է գայ»: Եւ Յիսուս իր պատասխանին մէջ կը թելադրէ, որ Եղիա մարգարէն արդէն եկած է ու մերժուած է: Աւետարանիչը կ'ըսէ, թէ աշակերտները հասկցան, որ Յիսուսի ակնարկութիւնը Յովհաննէս Մկրտիչին էր: Արդարեւ, ան պիտի ըլլար Եղիա մարգարէին օրինակով նախանձախնդիր մարգարէ մը:

ՀՈՎԻ  
ԳՔ

## ԹԱՓՈՐ ԼԵՌ

«Ոտքի ելէք, մի՛ վախնաք» (Մտ 17.6):

Փողոցն եմ:

Կը շարժի, Տէր,  
Շուրջս ամէն ինչ կը շարժի՝  
Կեանքիս ամէն ֆայլափոխին:

Կը բարձրանամ դէպի Թափոր,  
Սիրտս Քեզի բանալու:  
Ճամբան փունջ կը տանի:  
Ու ես գրկիդ,  
մանկան անմեղութեամբ կը մրափեմ:  
Եթէ կ'ուզես, - կը փսփսաս -,  
մաս կազմել խնկոյժիս,  
Ներէ նմանիդ,  
Ու յաղթանակ պիտի տեսնես:

Անակնկալօրէն կը սթափիմ ու  
Արեւանման փառքդ  
Կ'առնեմ Գիս:

Դուն... Անխախտ, հաստատ:  
Ես... յեղյեղուկ, պարտեալ:

Նոր շարժում մը կը բանայ աչքերս:  
Անհասանելիօրէն վեհ՝  
Հոն ես

Աշխարհի ստեղծումէն  
Մինչեւ երկրորդ գալուստդ:  
Դուն... հայեացքիդ մէջ տիեզերքը պահող:  
Կ'ուզեմ իւրացնել Քեզ, բայց  
Ես-իս պատկերով շինած կուռքս  
Կը պայթեցնես:

Երեւակայութիւնս կը լռէ  
Ու աշխարհս կ'անշարժանայ:

Կենսաղբիւր տեսիլդ հրաշքը,  
Պարուրուած լուսածին ամպիդ,  
Կը շանթահարէ Գիս:

Երկինքը բացուած՝  
Հօրդ վկայութիւնը կը պատմէ,  
«Անոր մօտիկ ըրէ՛ք» կ'նոտայ:

Երեսիս վրայ գետին կը փռուիմ:  
Ու երակներուս մէջ լոյսդ կը հոսի:

Դուն... Անխախտ, հաստատ՝  
Տէր Յիսու՛ս Քրիստոս:  
Ես... յեղյեղուկ, պարտեալ:  
... Բայց հիմա ոտքի՛:

Ու խունկ՝ սրտիս,  
Արձագանգ՝ ականջիս,  
Հաստատ ֆայլերով  
Ես կ'իջնեմ փողոց:

ՍԻՐԵՐԳԱԿ



## ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՆՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ  
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

ՅՈՎԱՆԱՆԷՍ ՄԿՐՏԻՅՈՒ ՔԱՐՈՇՈՒԹԻՄԵՐ (Բ):  
«Երբ Յովհաննէս տեսաւ շատ մը Սաղուկեցիներ եւ Փարիսեցիներ, որոնք իրմէ մկրտուելու եկած էին, ըսաւ անոնց.- Իժերո՛ւ ծնունդներ, ո՞վ ըսաւ ձեզի թէ կրնաք Աստուծոյ տալիք պատիժէն փախչիլ» (3.1-7): Ասկէ ետք՝ գործո՛վ ցոյց տուէք թէ ապաշխարած էք: Դուք ձեզի մի՛ խորհիք թէ կրնաք պատիժէն ազատիլ, ըսելով.- Մենք Արքայի մի որդիներ ենք:

Կ'ըսեմ ձեզի, որ Աստուած այս քարերէն ալ կրնայ Արքայի մի որդիներ հանել: Կացիներ արդէն իսկ պատրաստ է ծառերը իրենց արմատներէն կտրելու: Այն ծառը որ բարի պտուղ չի տար, պիտի կտրուի եւ կրակ նետուի: Ես ձեզ ջուրով կը մկրտեմ ապաշխարութեան իրրեւ նշան, բայց ան որ ինձմէ ետք կու գայ՝ ձեզ Ս. Հոգիով եւ կրակով պիտի մկրտէ: Ան ինձմէ աւելի հզօր է, եւ ես անոր կօշիկները կրելու իսկ արժանի չեմ: Հեծանոցը իր ձեռքին, ան պիտի մաքրէ իր կալը, ցորենը հաւաքէ շտեմարանին մէջ, իսկ յարդը այրէ անշէջ կրակով» (Մտ 3.7-12):

Ինչպէ՞ս հասկնալ Սաղուկեցիներուն եւ Փարիսեցիներուն ուղղուած Յովհաննէս Մկրտիչի բարկութեան արտայայտութիւնը:

Սովորական բարկութի՞ւն մըն է ասիկա: Այսինքն՝ մեր առօրեային մէջ տեսած կամ ունեցած բարկութի՞ւնն է: Այս բարկութիւնը ոեւէ մէկուն կորուստը չ'ուզեր. փրկութիւն ուզող բարկութիւն է ասիկա: Յովհաննէս Մկրտիչ բարկութեան արտայայտութեամբ կ'ազդարարէ, որ Սաղուկեցիները եւ Փարիսեցիները իրենց ընթացքը փոխեն կամ ապաշխարեն:

Բարկութեամբ այս ազդարարութիւնը մարգարէական է եւ կը նախատեսէ խնդրոյ առարկայ անձերուն կորուստը:

«Իժերու ծնունդներ» արտայայտութիւնը Յիսուս ալ պիտի գործածէր:

Նոյն աւետարանի 23-րդ գլխու «Վայ»երուն մէջ կը կարդանք. «Վայ՝ ձեզի, կեղծաւորներ, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ մարգարէներու շիրիմները կը շինէք եւ արդարներուն գերեզմանները կը զարդարէք ու կ'ըսէք.- Եթէ մենք մեր հայրերուն ժամանակը ապրած ըլլայինք, մարգարէներու սպանութեան մասնակից պիտի չըլլայինք:

«Ահաւասիկ դուք արդէն իսկ կը վկայէք, թէ որդիներն էք անոնց, որոնք մարգարէները կոտորեցին: Գացէ՛ք ամբողջացուցէ՛ք ձեր հայրերուն կիսատ ձգած գործը: Օձէ՛ր, իժերո՛ւ ծնունդներ, ինչպէ՞ս պիտի կարենաք փախուստ տալ դժոխքի դատապարտութենէն եւ այլն» (Մտ 23.29-33): Թէ՛ Յիսուսի այս արտայայտութիւնը եւ թէ՛ Յովհաննէս Մկրտիչի արտայայտութիւնը անարգական չեն: Երկուքն ալ անարգելու նպատակ չեն ունեցած: Անարգելը՝ դատապարտելի է միշտ. հայհոյելու համազօր բան է անարգելը: Յիսուս ինք ըսած է. «ով որ իր եղբայրը անմիտ կոչէ, դժոխքի կրակին պիտի դատապարտուի» (Մտ 5.22):

Յիսուսի եւ Յովհաննէս Մկրտիչի բարկութիւնը ատելութենէ ալ չի գար: Ատելութիւնը սպանութեան մայրն է: Ատելութիւնը սպանութիւն կը ծնի: Նոյնիսկ եթէ գործնական սպանութեան չէ թարգմանուած՝ անոր պատրաստ վիճակ է: Ուստի, դատապարտելի է: Յիսուսի, ինչպէս Յովհաննէս Մկրտիչի բարկութիւնը ատելութիւն չունի իր մէջ, այլ փրկութեան կոչ է: Յիսուսի պատգամն է.

«Լսեր էք արդարեւ որ ըսուած է.- Սիրէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ: Իսկ ես կ'ըսեմ ձեզի.- Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն» (Մտ 5.43-44): Թէ՛ Յովհաննէս Մկրտիչ եւ թէ՛ Յիսուս տեսան, որ Սաղուկեցիներն ու Փարիսեցիները Սատանային յանձնուած են. «Իժերու ծնունդներ» եւ «Օձէ՛ր, իժերո՛ւ ծնունդներ» արտայայտութիւնները ատիկա կ'ըսեն: Վստահաբար անոնցմէ ոմանք

Այս բարկութիւնը ոեւէ մէկուն կորուստը չ'ուզեր. փրկութիւն ուզող բարկութիւն է ասիկա:

Ատելութիւնը սպանութիւն կը ծնի:

մարգարէական բարկութեան վրայ գղջուծի եկան եւ փրկուեցան: Բայց հաւանական է, որ անոնցմէ շատեր, գուցէ մեծամասնութիւնը մնացին իրենց մեղքի ճամբուն մէջ:

Սատանան Աստուածաշունչին մէջ վիշապ կամ օձ կոչուած է (տե՛ս Ես 27.1, 51.9: Յոր 26.13: Սղ 74.13-14: Յյտ 12.9): Հետեւաբար, թէ՛ Յովհաննէս Մկրտիչի եւ թէ՛ Յիսուսի ըսածն է թէ՛ Դուք Սատանային որդիներն էք, որովհետեւ ո՛չ թէ միայն չարիք կը գործէք, այլ նաեւ կ'ուզէք յամառօրէն չարին մէջ մէջ արմատացած մնալ:

Ուրեմն, Սաղուկեցիներն ու Փարիսեցիները չէին եկած Յովհաննէս Մկրտիչի մօտ՝ անոր քարոզութիւնը լսելով խոստովանելու իրենց մեղքերը եւ մկրտուելու, այլ եկած էին չարամիտ ոգիով՝ անոր ըսածները ետքը իրենց ատեանին առջեւ զեկուցելու համար:

Անոնք կը հպարտանային, թէ իբր Աբրահամի որդիներ Աստուծմէ գալիք պատիժէն պիտի ազատին: Կը մտածէին, թէ իբր Աբրահամի սերունդ՝ ժառանգորդներն էին նահապետին եղած խոստումներուն: Եւ նկատի ունենալով, որ նահապետին հետ Աստուծոյ կնքած ուխտը կը պահէին, ուստի կը խորհէին՝ թէ իրենք արդէն փրկուած են: Բայց Յովհաննէս Մկրտիչ կը յայտարարէր, թէ մարմնաւորապէս ծնունդը, այսինքն՝ հրեայ ըլլալը եւ օրինապահութիւնը բաւարար չէին զիրենք ժառանգորդները դարձնելու Աբրահամի եղած խոստումներուն, որովհետեւ Աստուած քարերէն ալ կրնայ Աբրահամի որդիներ հանել: Յովհաննէս Մկրտիչի շեշտը ապաշխարութեան վրայ էր: Անոր կոչն էր գործով ցոյց տալ ապաշխարած ըլլալը:

Ապաշխարութիւնը հոգեւոր վիճակ մըն է, որ գործնական կեանքին մէջ պտղատու կ'ըլլայ:

Ապաշխարութիւնը հոգեւոր վիճակ մըն է, որ գործնական կեանքին մէջ պտղատու կ'ըլլայ: Երբ ծառը պտուղ չի տար, կը նշանակէ թէ՛ իր աւիշը կամ սնունդը լաւ չէ առած: Նոյնպէս երբ մէկը կ'ըսէ, թէ առ Աստուած դարձած է

ապաշխարութեամբ, եւ սակայն բարի պտուղ չի տար, ըսել է թէ սխալ բան մը կայ իր ընթացքին մէջ: Ապաշխարութիւնը հրապարակային ծանուցումէ շատ աւելին է: «Ապաշխարած եմ» ըսելով՝ մէկը առ Աստուած դարձած չըլլար: Իսկական ապաշխարութիւնը պտղատու է, բարի գործեր կ'ունենայ: Ապաշխարութեան բարի գործեր կը հետեւին: Ի՞նչ օգուտ՝ եթէ ես զգացական պահու մը ձեռքերս բարձրացնեմ եւ «ապաշխարած

եմ» ըսեմ, եւ յաջորդող օրերուն կեանքս երբեք յայտարարութեանս արտայայտութիւնը չըլլայ: Մինչդեռ առանց այդ յայտարարութեան իսկ, երբ իմ կեանքս Աստուծոյ հաճելի գործերով կը լեցուի, լուկեայն յայտնած կ'ըլլամ առ Աստուած դարձած ըլլալս: Աստուած կամ Յիսուս մեզմէ յայտարարութիւն չէ որ կ'ակնկալեն, այլ ապաշխարութեան գործեր:

Աստուած կամ Յիսուս մեզմէ յայտարարութիւն չէ որ կ'ակնկալեն, այլ ապաշխարութեան գործեր:

Յովհաննէս Մկրտիչի բարկութեան արտայայտութիւնը միայն Սաղուկեցիներուն եւ Փարիսեցիներուն չի վերաբերիր, այլ նաեւ բոլոր մարդոց: Մարդիկ պէտք է զգաստանան եւ փոխուին: Մեր պարագային եւս՝ ազգային սնապարծութենէ դուրս գալը եւ Աստուծոյ հետ նոր յարաբերութիւն մը ձգելը կենսական են:

«Կ'ըսեմ ձեզի, որ Աստուած այս քարերէն ալ կրնայ Աբրահամի որդիներ հանել»: Աբրահամի որդի ըլլալը մարմնաւոր ժառանգորդ ըլլալուն մէջ չի կայանար, այլ՝ անոր հաւատքին ժառանգորդ ըլլալուն: Եւ Աբրահամի հաւատքը բարի գործեր կատարելու մղիչ ուժ է: Աբրահամի ժառանգորդ են բոլոր անոնք՝ որ Աստուծոյ կը հաւատան եւ բարի պտուղ կու տան:

«Կացինը արդէն իսկ պատրաստ է ծառերը իրենց արմատներէն կտրելու: Այն ծառը որ բարի պտուղ չի տար, պիտի կտրուի եւ կրակ նետուի»: Այս փոխաբերութեամբ Յովհաննէս Մկրտիչ կ'ըսէ, թէ քանի որ Սաղուկեցիները եւ Փարիսեցիները գործնապէս առ Աստուած չէին դարձած՝ անպտուղ ծառերու պէս պիտի կտրուին եւ կրակը ձգուին:

Կրակը թէ՛ Հին Կտակարանին եւ թէ՛ Նոր Կտակարանին մէջ խորհրդանշանն է Աստուծոյ դատաստանին: Յովհաննէս Մկրտիչ այս փոխաբերութեամբ կրօնական երկու շարժումներուն վրայ Աստուծոյ Դատաստանին հասնիլը կը մարգարէանար:

...ազգային սնապարծութենէ դուրս գալը եւ Աստուծոյ հետ նոր յարաբերութիւն մը ձգելը կենսական են:

«Ես ջուրով կը մկրտեմ ապաշխարութեան իբրեւ նշան, բայց ան որ ինձմէ ետք կու գայ՝ ձեզ Ս. Հոգիով եւ կրակով պիտի մկրտէ»: Մինչեւ այս համարը Յովհաննէս Մկրտիչ կարապետի իր պաշտօնով ներկայացուած էր մեզի: Այսինքն՝ իբր այն անձը

որ եկած էր Տիրոջ ճամբան պատրաստելու կամ անոր շաւիղները հարթելու համար: Այստեղ ան կը խօսի Քրիստոսի մասին, որ Ս. Հոգիով եւ կրակով պիտի մկրտէ: Յովհաննէս Մկրտիչ իր կատարած մկրտութիւնը կը սահմանէ իբր պաշխարութեան նշան: Իր մկրտութիւնը նշանն է մկրտեալներու առ Աստուած դարձին: Իսկ Քրիստոսի կատարելիքը կը ներկայացնէր իբր Ս. Հոգիով եւ կրակով մկրտութիւն: Յովհաննէսի աւետարանին մէջ կը կարդանք, թէ Յիսուս իր աշակերտներուն հետ Հրէաստանի գաւառները կը շրջէր եւ կը մկրտէր (3.22). նաեւ կը կարդանք լուսաբանութիւնը, թէ Յիսուս ինք անձամբ չէր մկրտեր, այլ իր աշակերտներն էին մկրտողները (4.1-2): Յովհաննէս աւետարանիչ հաւանաբար ուզած է Յիսուսի աշակերտներուն եւ Քրիստոսի մկրտութեան տարբերութիւնը արձանագրել: Յիսուս Ս. Հոգին պիտի խոստանար նախքան իր ձերբակալութիւնը (ՅՏ 14.15-17): Ս. Հոգիին խոստումը կապուած էր Յիսուսի այս աշխարհէ մեկնումին:

«Ս. Հոգիով եւ կրակով»: Ի՞նչ է ըստուածը:

Նախ թէ՛ Քրիստոսի մկրտութիւնը պիտի ըլլար այնպիսին՝ որով մկրտեալը ոչ թէ միայն պիտի մաքրուէր, այլեւ պիտի արժանանար իմաստութեան մը՝ որ աշխարհի իմաստութեանէն տարբեր է:

Քրիստոսի մկրտութիւնը պիտի ըլլար այնպիսին՝ որով մկրտեալը ոչ թէ միայն պիտի մաքրուէր, այլեւ պիտի արժանանար իմաստութեան մը՝ որ աշխարհի իմաստութեանէն տարբեր է: Եւ ինչ որ կը խօսինք՝ մարդկային իմաստութեան բերումը եղող խօսքեր չեն, այլ՝ Ս. Հոգիին կողմէ սորվեցուած իմաստութեամբ հոգեւոր ճամբարտութիւններ կը բացատրենք հոգեւոր մարդոց: Աստուծոյ Հոգին չունեցող մարդը չ'ընդունիր Աստուծոյ Հոգիին բերած ճամբարտութիւնները, որովհետեւ անոնք յիմարութիւն կը թուին իրեն. եւ չի կրնար գանոնք ճանչնալ, որովհետեւ անոնք միայն Հոգիով կը քննուին: (...) մենք գիտե՛նք, թէ Քրիստոս ինչ կը խորհի» (Ա. Կր 2.12-14, 16):

«Կրակով»ը ակնարկութիւն է նաեւ աշխարհի վախճանին արդարներու եւ չարիք գործողներու հաւաքումին, արդարներուն արքայութեան մէջ ժողովումին, իսկ չարիք գործողներուն «բոցավառ հոտի մէջ» նետուելուն. յիշել Որոմին առակը (Մտ

13.24-30, նաեւ մեկնաբանութիւնը՝ հմբք 36-43):

Բայց թէ ի՞նչ կապ կայ Ս. Հոգիին եւ կրակին կամ վախճանական դատաստանին միջեւ: Եկեղեցին համաձայն իրեն ենթահող աւանդութեան՝ առաջին օրերէն այդ կապը տեսած էր: Հոգոգալստեան դէպքէն անմիջապէս ետք Պետրոս առաքեալ իր ճառին մէջ Ս. Հոգիի ստացման փորձառութիւնը բացատրելու համար Յովել մարգարէէն մէջբերում մը կատարած է՝ ուր յստակօրէն կ'ըսուի. «Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներու եւ աղախիններու վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի: Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցոյց տամ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով եւ թանցր ծովով պիտի լեցուի, արեւը պիտի խաւարի, եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ նախքան Տիրոջ մեծ եւ փառահեղ օրուան գալը: Այն ատեն ով որ Տէրը օգնութեան կանչէ՝ պիտի փրկուի» (ԱԳ 2.18-21): Ուրեմն, Յովհաննէս Մկրտիչի միտքն էր նաեւ՝ թէ Քրիստոսի մկրտութիւնը զայն ստացողներուն վախճանական փրկութեան պիտի ծառայէ, որովհետեւ զիրենք մաքրող, զիրենք իմաստութեամբ լեցնող Ս. Հոգին իրենց վրայ պիտի հանգչի եւ արդար կեանք մը ապրելով՝ արքայութեան մէջ ժողովուելու արժանի պիտի ըլլան:

Յովհաննէս Մկրտիչ կը յայտնէր, որ իր մկրտութիւնը նախապատրաստութիւն մըն էր աւելի ազդու մկրտութեան մը, որովհետեւ անիկա պիտի կատարուի, կ'ըսէր, իրմէ «աւելի հզօր»ի մը կողմէ, որուն կօշիկներն անգամ կրելու արժանի չէր զգար ինքզինք:

«Հեծանոցը իր ձեռքին, ան պիտի մաքրէ իր կալը, ցորենը հաւաքէ շտեմարանին մէջ, իսկ յարդը այրէ անչէջ կրակով»: Դատաստանի օրուան պատկերացում է ասիկա: Հեծանոցը եռաժանի կամ քառաժանի այն գործիքն է, որով ցորենի դէզերը օդը կը նետէին, որպէսզի հովը յարդը տանէր, իսկ ցորենի հատիկն ալ վար թափուելով գատուէր: Յովհաննէս Մկրտիչ այս փոխաբերութեամբ կ'ըսէ՝ թէ Քրիստոս ինք դատաւորն է, որ չարիք գործողները «անչէջ կրակով» պիտի այրէ, իսկ արդարները պիտի հաւաքէ արքայութիւն-շտեմարանին մէջ: «Անչէջ կրակ»ը չարերուն յաւիտեանական տանջանքը կը խորհրդանշէ:

(Շարունակելի 8)

«Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներու եւ աղախիններու վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի:»

**Յաջորդ շաբաթուայ  
Ժամանակացոյժ**

Յինգշաբթի, 03 Յուլիս 2008

11.00 > Աղօթածողով՝  
Ս. ՅԱԿՈՒ քոյրերու ժողով

Կիրակի, 06 Յուլիս 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն  
11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

Կիրակի 13 Յուլիս 2008-ի ժամը  
12.00-ին, Անթիլիասի մէջ նոր  
օրհնուած միտոնով ջրօրհնէքի  
արարողութիւն պիտի կատարուի  
եկեղեցոյս մէջ:

**ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԺԵՂՈՒԹԻՒՆ**  
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.  
Տ. Գառնիկ Բինյ. Գոյունեանին.  
514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիփն:

Սոյն թերթիւր ե-նամակով ստանալու  
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՂԱԿԵՅՔԷ  
eglise58@sourphagop.com-ըս

**ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ  
ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ  
ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ  
Կը վերսկսի**

ՇԱԲԱԹ 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008-ԻՆ



**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ  
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԽՕՐՕՔ  
ԿԱՏԱՐԵՅՔԷ ԿԱՊՈՒԷՂՈՎ  
ԵԿԵՂԵՅՈՅՍ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

**ՀԱՄԱՅՆԵՐԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ**

**ԲՅՅ Է  
ԵՐԿՈՒԵԱԹԻՒՆ ՈՒՐԲԱԹ  
ԺԱՄԸ 8.30-ԷՆ 16.00**

**ՀԱՃԵՅՔԷ ԿԱՊՈՒԷՂ ԸՆԴՏՈՒՂԱՐԻՆ՝  
514 331 5445 x202  
ԿԱՄ ՀՆՈՒԻՒՆ՝  
514 331 5445 x203  
ԿԱՄ ԳՐԵՂ ՀԵՏԵԷՎ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝  
eglise58@sourphagop.com**